

Այս համարում

ԹՅԱՆՆԵՐԸ ՄՅԱՑԿ

1- Խմբագրական.....	1
2- Լուրեր - Իրանահայ.....	2
3- Լուրեր - Իրան.....	2
4- Լուրեր - Հայաստան.....	3
5- Լուրեր - Սիցազգային.....	6
6- Հասարակական	
<i>Ժողովրդական Միասնական Հանձնախումբ....</i>	7
<i>Իրանահայ մտավորականների հավաք....</i>	8
7- Մշակութային	
<i>Զավախք՝ թատրոն....</i>	9
<i>Ժառանգություն՝ Հրամտ Մատեոսյան....</i>	9
<i>Հրաչյա Աճառյանը Պարսկաստան(1)....</i>	10

ՀՅԱՆՆԵՐԸ ՄՅԱՑԿ

1- Խմբագրական.....	1
2- Լուրեր - Իրան	1
3- Լուրեր - Հայաստան.....	2
4- Հետաքրքրական.....	2

Շապիկի առաջին էջում՝

Սարդարապատ

Շապիկի վերջին էջում՝

Րաֆֆի Մարզամշակութային համալիրի Ֆուտբոլի
խումբը

ԹՅԱՆՆԵՐԸ 133, Ջանվե, 2007թ.

No. 133, June 2007

1386 - شماره لویس - ماه دارد ۱۳۳


Խմբագրական

Մամուլի հրատարակման դժվարությունները արդեն իսկ հայտնի են բոլոր ընթերցասեր անձանց, ուստի խուսափելով կրկնություններից, միայն հարկ ենք համարում հայտնելու մեր սիրելի ընթերցողներին, որ «ԼՈՒՅ»-ն էլ զերծ չի մնացել այդ դառ սակայն համառորեն կենդանի հրականությունից: Ուստի նյութական ծանր ծախսերը ինչ-որ չափով թերեւացնելու նապատակով նախ 2002 թվականի սկսրից տպագրական եղանակը փոփոխության ենթարկեցին եւ նոյն թվականի սեպտեմբերից սկսյալ էջերի թիվը համարյա թե կիսեցինք, իսկ 2005 թ. ապրիլին դիմելով իր արաջնորդության նախարարության «ԼՈՒՅ»-ը դարձրինք անսագիր: Այդ թվականներից որպեսզի «ԼՈՒՅ»-ի լույսը վառ պահենք, դրան հրատարակել ենք համացանցում եւ սահմանափակ թվով տպագիր: Ծրագրում ենք ամսագրի կայքեզր հիմնովին բարելավելով՝ կարողանանք բոլոր համարները տեղադրել այնտեղ՝ օժտվելով ավելի լայն տեխնիկական հնարավորություններով:

Իրանահայ մամուլը վաղուց է չի կարողանում ապահովել համայնքին՝ բավարար և թափանցիկ համահայկական ու հատկապես համայնքային լուրերով ու անցուդարձերով: Այժմ հիշատակված դժվարությունները մասամբ հաղթահարելուց հետո «Լույս» երկշաբաթաթերթը՝ որպես ամսագիր, տրամադրվում է մեր սիրելի ժողովրդի ուշադրությանը: Լույսը հավատարիմ մնալով իր սկզբունքներին՝ կաշխատի ժողովրդավարական հիմունքներով մոտենա բոլոր հարցերին և կարտացոյի իրանահայ, հայրենիքի ու սիյուռքահայ մտավորականների կարծիքներն, անկախ նրանց գաղափարական կամ շրջանակների պատկանելիությունից: Մեր համայնքում եղած մամուլը իր սահմանափակումներով անկարող է արտացոլել իրանահայ բոլոր շրջանակների նարզանշակութային աշխատանքներն ու հասարակական-քաղաքական տեսակետները, որոնց արտացոլումը և տեսակետների բախումը առաջնային ամիրաթեշտություն է նորմալ նի համայնք ունենալու համար:

«Լույս»-ը տպագրվում է նոր ուղղագրությամբ, ապահովելով լեզվի զարգացման անհրաժեշտ ուղին, գտնելով, որ այս ուղղությամբ հանապատասխան մասնագետներն ու հաստատությունները բազմիցս անրագրել են իրենց տեսակետները: Նաեւ հարգում ենք մեր ավանդական ուղղագրությունը եւ հեղինակի ցանկության պարագայում իր գրությունը կտպագրենք իր ցանկացած ուղղագրությամբ:

Վստահ ենք, որ մեր ընթերցողներն ու բարեկամները նախկինի պես կաջակցեն և կը համագործակցեն ամսագրին:



Լուրեր

Իրանահայ Համայնք

Կանաչապատվեց «Րաֆֆի» ՍՍ Համալիրի Ֆուտբոլի դաշտը

Չորս տարի շարունակ «Րաֆֆի» Համալիրի երեցների, հիմնադիրների և հատկապես ակտիվ հիմնադիրներից՝ Պրն. Պետրոս Արքարյանի ջանքերի շնորհիվ կանաչապատվեց Ֆուտբոլի դաշտը։ Այս կապակցության իրանի խվանական Խորհրդարանի հայ պատգամավոր Պրն. Գևորգ Վարդանի միջնորդությունը նաև իր դրական ազդեցությունը ունեցավ այս բնագավառում։

Արդեն նարմաք թաղանասի 100-ի շուրջ երեսաններ օգտվում են գետնից և համալիրի Ֆուտբոլի խումբը ավելի է աշխուժացել։ Կյանքի է կոչվել կանաչապատման գետնի պահպանման և ծրագրավորման հանձնախումբ, որը բոլոր իր ջանքերը ներդնում է ամենալավ կերպով օգտագործելու այդ մարզադաշտը։

Իրանահայ բժիշկները մասնակցելու են Երեւանում կայանալիք միջազգային համահայկական բժիշկների համագումարին

2007 թվականի Հունիսի 28-30-ը Երևանում գումարվելու է համահայկական բժիշկների երկրորդ համագումարը։ Այս համագումարում քննարկվելու են բժշկական և առողջապահական տարրեր բժմաներ։ Ներկայացվելու է նաև Հայաստանի բժշկական որոշ հարցեր։ Իրանի հայ բժիշկների միության մի շարք անդամներ մասնակցելու են այս համագումարին։

Միասնական հանձնախումբ

Վերջերս իրանահայ համայնքում կյանքի է կոչվել միասնական մի հանձնախումբ, որը համադրելու է համայնքայի մասշտարկվով աշխատանքներ։ Այս հանձնախումբին նաև են կազմում ՀՍՍ «Րաֆֆի» համալիրը, իրանահայ Ազգային և մշակութային միությունը, Արաքս պարբերաթերթը, ԹՇԹ-ի մի խումբ անկախ պատգամավորները, հայ աշխարհատեսների կենտրոնները և ազատ մտավորականներ։

Հայոց ցեղասպանության ոգեկոչման 92-րդ միջոցառումների ընթացքում այս հանձնախումբը Հայաստանի Հանրապետությունից իրավիրել էր Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի թթագիտության ամբիոնի Վարիչ՝ պրոֆեսոր Ալեքսանդր Սահարյանին, որպես բանախոսելու և նտքերի փոխանակումներ ունենալու իրանահայ տարրեր միությունների ու շրջանակների հետ։ Հանձնախումբը ուսումնասիրում է մի շարք համայնքային խնդիրներ և հնարավորինս լուծումներ առաջարկում։

ՀՀ Դաշնակցության շրջանակներեր դեռևս կոնկրետ և հստակ դիրքորոշում չեն հայտառարել այս հանձնախումբը նկատմամբ, սակայն հանձնախումբը ինքը նախաձեռնել է միասնական քայլերի և ձեռք է մեկնել համագործակցության համար։ Հույսով են նրանք կը կարողանան իրենց եղած ուժերը մորթիզացնելով։

միասնաբար աշխատեն համայնքային հարցերը լուծելու և համագործակցությունը սերմանելու ուղղությամբ, հավասար կարգավիճակով։

Յաջողություն ենք մաղթում նորաստեղծ հանձնախումբին, «Լույս» ամսագիրը իր պատրաստակամությունն է հայտնում ամեն տեսակի համագործակցության համար այս եւ բոլոր ազգանվեր եւ հայրենաշունչ ձեռնակների հետ։

Իրան եւ այլ երկրների բարեկամական միություններ

Իրանում աստիճանաբար զարգանում և իրենց տեղն են գտնում Իրան և այլ երկրների բարեկամության ոչ պետական կազմակերպությունները (NGO)։ Որպես օրինակ կարելի է նշել Իրան-Բրազիլիա, Իրան-ճապոնիա, Իրան-Նիդերլանդների բարեկամության միությունները։ Ուրախությամբ պետք է հայտնենք, որ ինչպես պարսկական մամուլն է հաղորդել կազմակերպման ընթացքում է Իրան-Հայաստան բարեկամության միությունը։

Պատգամավորական Ժողովում

2007 թվականի Մայիսի 10-ից մինչև Մայիսի 16-ը ԹՇԹ-ի Պատգամավորական Ժողովը ամեն օր գումարեց իր նիստերը և զբաղվեց կրոնական Խորհրդի գեկույցի ունկնդրամամբ, կրոնական աշխատանքների բնագավառում պատգամավորների կողմից հարցերի ուսումնասիրությամբ։ Այս քանի օրերի ընթացքում թեմական Խորհրդը և հաշվեքննիչ մարմինը ներկայացրին իրենց նյութական և բարոյական գեկույցները, պատգամավորները անդրադարձան այդ երկու մարմինների տարած աշխատանքների տարրեր հարցերին, եղան ըստ էության արտահայտություններ ու աշխատանքների գնահատում։ Ընթերցվեց Մեծի Տան Կիլիկ Կաթողիկոս Արամ Վեհափառի պատգամը ԹՇԹ-ի ՊՃ-ին։ Ընթերցվեց երկու իրաժարված պատգամավորների նամակները։ Ընթերցվեց «Րաֆֆի» ՍՍ Համալիրի նամակը, որը վերաբերում է խորականությանը եւ մշակութային հայտարարությունների չփակցնելու կապակցությամբ, որի արդյունքում որոշվեց նեղ շրջանակում ուսումնասիրել և քննության ենթարկել այս հարցը։ Վերջին օրը Ներքին Գործոց նախարարության ներկայացուցիչ Տիկ. Անդրտիգինի ներկայությամբ կատարվեց թեմական Խորհրդի ընտրություններ և ընտրվեցին հետյալ անհատները՝ 1- Այհան Ջովիհամիսյան, 2- Վահիկ Աղաբյան, 3- Էսիկ Տեր Ստեփանյան, 4-Արա Շահվերդյան, 5- Թաթուլ Էդգարյան 6- Վիգեն Գալստյան, 7- Համիկ Մարգարյան, 8- Հարություն Արնուսի, 9-Մարտ Այվազյան, 10- Սևան Դամիելյան, 11- Արմավիր Մարգարյան։

Որպեսզի մեր համայնքի անդամները տեղյակ լինեն իրենց համայնքի հարցերից և որպեսզի նրանք էլ մասնակից լինեն տարրեր հարցերի քննարկմանն ու լուծմանը, «Լույս» ամսագիրը կաշխատի առաջիկա համարներում կատարել իր մամուլի պարտականությունը ներկայացնելով տեղեկություններ ու գոյություն ունեցող տարրեր մոտեցումներ մեր համայնքի տարրեր հարցերի շուրջ։

Իրան


Թեհրանում անցկացվող «Գրքի միջազգային 20-րդ ցուցահանդեսին» մասնակցում է նաեւ Հայաստանը

ԵՐԵՎԱՆ, 10 ՄԱՅԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Մայիսի 2-12-ը Թեհրանում անցկացվող «Գրքի միջազգային 20-րդ ցուցահանդեսին», ի դեմս ՀՀ դեսպանության, առաջին անգամ մասնակցում է նաեւ Հայաստանը՝ առանձին տաղավարով:

Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ ԱԳՆ մամուլի եւ տեղեկատվության վարչությունից, ցուցահանդեսը բաղկացած է տեղական եւ օտարերկրյա գրականության հիմնական երկու տարրեր բաժիններից: Օտարերկրյա գրականության սրահում ՀՀ տաղավարից բացի, առանձին տաղավարներով մասնակցում են նաեւ ԻԻԴ-ում ՄԱԿ-ի, Վենեսուելայի, Մեքսիկայի, Սաուդյան Արաբիայի, Թուրքիայի, Թունիսի, Օմանի, Սիրիայի, Հայավային Կորեայի, Հնդկաստանի, «ECO», «ISESCO» երկրների ներկայացուցչություններն, ինչպես նաեւ Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Ադրբեյչանի հրատարակչական հաստատությունները, Թուրքիայի գրուսարշիկության եւ Տաջիկստանի մշակութի նախարարությունները:

«Գրքի միջազգային 20-րդ ցուցահանդեսի» ՀՀ տաղավարում ներկայացված են Եկեղեցական, պատմական, Հայոց ցեղասպանության, մշակույթի, աշխարհագրության, գրոսարշիկության, բիզնեսի, մանկական եւ գեղարվեստական գրականության հատունիր նմուշներ, ինչպես նաեւ ցուցադրվում է Հայաստանի տեսարժան վայրերի վերաբերյալ տեսանյութ, որոնք արժանացել են բազմաթիվ այցելուների մեջ ուշադրության: Հայաստանն առանձին բաժնով ներկայացված է նաեւ Կովկասի, Կենտրոնական Ասիայի եւ Ուսաստանի հետազոտությունների իրանական «IRAS» հաստատության տաղավարում:

Ցուցահանդեսի ընթացքում միաժամանակ կազմակերպվում են մի շարք դասախոսություններ, քննարկումներ եւ այլ մշակութային միջոցառումներ:



Հայաստան

ՀՀ ԿԸՀ-ն վավերացրեց Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքները

ԵՐԵՎԱՆ, 13 ՄԱՅԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովն այսօր՝ 17:00-ին հրավիրած հերթական նիստում 6 կողմ եւ 3 դեմ հարաբերակցությամբ վավերացրեց ՀՀ Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրությունների նախնական արդյունքները:

Դիմք ընդունելով տեղամասերում քվեարկության արդյունքները՝ ԿԸՀ-ն արձանագրեց, որ ընտրողների ընդհանուր՝ 2 մլն 316 հազար 38 թվից, ընտրություններին մասնակցել են 1 մլն 389 հազար

521քաղաքացի: Կուսակցություններին կամ կուսակցությունների դաշինքին կողմ քվեարկած քվեարերիների ընդհանուր թիվը կազմել է 1 մլն 351 հազար

669:

Սահմանված 5 տոկոսի շեմը հաղթահարել են Հայաստանի Հանրապետական կուսակցությունը՝ 457 032 թվե, «Բարգավաճ Հայաստանը՝ 204 443, ՀՀ դաշնակցությունը՝ 177 192 թվե, ինչպես նաեւ «Օրինաց երկիր» եւ «Ժառանգություն» կուսակցությունները. նրանց օգտին, համապատասխանաբար, քվեարկել է 95 256 եւ 80 890 թաղաքացի:

Մնացած կուսակցությունների ձայները բաշխվել են հետևյալ կերպ.

Ազգային ժողովողական կուսակցություն՝	8	591
«Ազգային հանձնայնություն»՝	4	251
«Ազգային միաբանություն»՝	49	863
«Դաշինք»՝	33	093
ժողովողական կուսակցություն՝	37	034
«Ժողովողավարական ուղի» կուսակցություն՝	8	468
«Ինպիչմենտ»՝ դաշինք՝	17	808
Հայաստանի նեմոնկրատական կուսակցություն՝	3	780
Հայաստանի երիտասարդական կուսակցություն՝	2	303
ՀԺԿ՝	23	629
Հայաստանի կոմունիստական կուսակցություն՝	8	835
Հայաստանի մարքսիստական կուսակցություն՝	2	896
«Հանրապետություն» կուսակցություն՝	22	609
ՄԱԿ՝	59	307
ՄԻԱԿ՝	2	748
«Նորժամանակներ»՝ 47		018
ՄԴՀԿ՝	1	033
ՔԺԿ՝	3	591:

ՀՀ ԿԸՀ-ն հիմք ընդունելով տեղամասերում քվեարկության արդյունքները արձանագրեց նաեւ, որ սահմանված նմուշի քվեարկության ժողովների թիվը կազմել է 1 մլն 396 հազար 215, վավեր քվեարերիների թիվը՝ 1 մլն 350 հազար 559-ը: Անձշտությունների չափը կազմել է 10 հազար 942:

Արձանագրությունը չստորագրեցին «Ազգային միաբանություն» կուսակցության ներկայացուցիչ Զավեն Պլույանը, «Օրինաց երկիր» կուսակցության ներկայացուցիչ Սոնա Սարգսյանը եւ «Արդարություն» դաշինքի ներկայացուցիչ Ֆելիքս Խաչատրյանը: Ս. Սարգսյանը հայտարարեց, թե ՕԵԿ-ը մտադրված է ընտրությունների արդյունքները բողոքարկել Սահմանադրական դատարան:

«Արդարություն» դաշինքի ներկայացուցիչն առաջարկեց անվավեր ճանաչել համամասնական ընտրակարգով՝ ընտրությունների նախնական արդյունքները: Ըստ Ֆ. Խաչատրյանի՝ ընտրությունների ընթացքում տեղի են ունեցել այնպիսի եական խախտումներ, որոնք կարող են ազդել արդյունքների վրա: Առաջարկը դրվեց քվեարկության եւ մերժվեց 6 դեմ, 3 կողմ ձայնով:

Հրապարակվել են մեծամասնական ընտրակարգով ընտրությունների Վերջնական արդյունքները

ԵՐԵՎԱՆ, 18 ՄԱՅԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքների վերաբերյալ արձանագրությունները եւ ընդունված որոշման

օրինակներն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները ներկայացրել են Կենտրոնական ընտրական

հանձնաժողով:

Հանձնաժողովները պերջնական արդյունքներով մեծամասնական ընտրակարգով պատգանավորներ են ընտրվել՝ թիվ 1 ընտրատարածքում Ռուբեն Հայրապետյանը (ՀՀԿ), թիվ 2 ընտրատարածքում Ռաֆիկ Պետրոսյանը (ՀՀԿ), թիվ 3 ընտրատարածքում՝ Աշոտ Տոնոյանը (ԲՀԿ), թիվ 4-ում՝ Զոհրապ Զոհրապյանը (անկուսակցական), թիվ 5-ում՝ Լեւոն Սարգսյանը (ՀՀԿ), թիվ 6-ում՝ Հարություն Փամբուկյանը (ՀՀԿ), թիվ 7-ում՝ Սամվել Ալեքսանյանը (անկուսակցական), թիվ 8-ում՝ Հակոբ Հակոբյանը (անկուսակցական), թիվ 9-ում՝ Ռուբեն Սարգսյանը (ՀՀԿ), թիվ 10-ում՝ Խաչատուր Սուքիասյանը (անկուսակցական), թիվ 11-ում՝ Գրիգոր Սարգսյանը (անկուսակցական), թիվ 12-ում՝ Վերսանդիկ Հակոբյանը (ԲՀԿ), թիվ 13-ում՝ Արմեն Պոլոտյանը (ՀՀԿ), թիվ 14-ում՝ Լյովա Խաչատրյանը (անկուսակցական), թիվ 15-ում՝ Խաչիկ Մանուկյանը (ՀՀԿ), թիվ 16-ում՝ Տիգրան Ստեփանյանը (ԲՀԿ), թիվ 17-ում՝ Հենրիկ Արքահամյանը (ՀՀԿ), թիվ 18-ում՝ Մանվել Ղազարյանը (անկուսակցական), թիվ 19-ում՝ Սեդրակ Սարգսյանը (անկուսակցական), թիվ 20-ում՝ Հրանտ Գրիգորյանը (ՀՀԿ): Թիվ 21 ընտրատարածքից ընտրվել է Ռուստան Գասպարյանը (անկուսակցական), թիվ 22-ից՝ Տիգրան Արզաքանցյանը (ՀՀԿ), թիվ 23-ից՝ Հրանտ Սաղարյանը (ԲՀԿ), թիվ 24-ից՝ Հակոբ Հակոբյանը (ՀՀԿ), թիվ 25-ից՝ Սասուն Միքայելյանը (ՀՀԿ), թիվ 26-ից՝ Ռոբերտ Թովմասյանը (ԲՀԿ), թիվ 27-ից՝ Մելիք Մանուկյանը (ԲՀԿ), թիվ 28-ից՝ Գագիկ Ծառուկյանը (ԲՀԿ), թիվ 29-ից՝ Արկադի Համբարձումյանը (անկուսակցական), թիվ 30-ից՝ Վիկտոր Դալլաքյանը (անկուսակցական): Թիվ 31 ընտրատարածքից պատգանավոր է ընտրվել Կարեն Սարհելյանը (ՀՀԿ), թիվ 32-ից՝ Սուրեն Պոլոտյանը (ՀՀԿ), թիվ 33-ից՝ Աշոտ Աղաբարյանը (ՀՀԿ), թիվ 34-ից՝ Մարտուն Գրիգորյանը («Դաշինք»), թիվ 35-ից՝ Սամվել Բալասանյանը (ՕԵԿ), թիվ 36-ից՝ Միհիթ Վարագյանը (անկուսակցական), թիվ 37-ից՝ Ալեքսանդր Սարգսյանը (ՀՀԿ), թիվ 38-ից՝ Վահե Հակոբյանը (ՀՀԿ), թիվ 39-ից՝ Սամվել Սարգսյանը (ՀՀԿ), թիվ 40-ից՝ Միքայել Վարդանյանը (անկուսակցական) եւ թիվ 41 ընտրատարածքից՝ Հակոբ Հակոբյանը (ՕԵԿ):

Ընդդիմադիրներ մի շարք ուժեր պահանջում են անվավեր ճանաչել ընտրությունների արդյունքները

Ազատության իրապարակում հանրահավաք հրավիրած ուժերի անունից «Ինպիչմենտ» դաշինքի ներկայացուցիչ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ իրենք հանդես են գալիս մայիսի 12-ի ընտրություններն անվավեր ճանաչելու միասնական պահանջով: Ելույթ ունեցողները նշեցին, որ իրենց նպատակին հասնելու համար օգտագործելու են ինչպես իրավական, այնպես էլ քաղաքական պայքարի միջոցներ:

«Պետք է նշանակվի վերաբերություն եւ այդ գործընթացին մասնակցեն միայն այն ուժերը, ովքեր պատրաստ են արդարության սկզբունքով պայքարել», - հայտարարեց հանրահավաքի մեկնարկին իր եռօրյա նստացույցը դադարեցրած Նիկոլ Փաշինյանը: «Այն իրավիճակը, որ այսօր կա Հայաստանում, վիճարկելի է, այդ իրավիճակը վիճարկվում է, եւ մենք այդ

իրավիճակի հետ չենք համակերպելու: Ամեն ինչ անելու ենք այդ իրավիճակը փոխելու համար: Այնպես որ, թող գոյն ցանկացած թվերը եւ ին կողմից կարող են ասել, որ «Ինպիչմենտ»-ին գրված ձայները նվիրում են Հանրապետական կուսակցությանը», - «Ազատություն» ռադիոկայանին ուղբար օրը ավելի վաղ ասել էր Փաշինյանը:



Հանրահավաքի կազմակերպիչները հայտարարեցին, որ իրենց նախաձեռնածը ժողովրդական շարժում է լինելու. Նիհայն հանրահավաքներով չի սահմանափակվելու, պետք է ավելի մեծ ուժեր ներգրավել, աշխատել օտարերկրյա դիվանագետների հետ, ովքեր, նրանց կարծիքով, խարված են:

«Ինպիչմենտ» դաշինքի, «Նոր ժամանակներ», «Հանրապետություն» կուսակցությունների նախաձեռնությանը, հավելում դեռ անցած հանրահավաքին ներկա Հայաստանի ժողովրդական կուսակցության (ՀԺԿ), ուղբար օրը միացել էր նոր ուժ՝ «Օրինաց երկիր»-ը, որը, սակայն, ներկայացված չէր առաջին դեմքով. Ազատություն իրապարակի հարթակում էր «Օրինաց երկիր»-ի փոխնախագահ Հեղինե Բիշարյանը:

Հանրահավաքի ավարտին ցուցարարները երթով շարժվեցին դեպի Հանրապետության իրապարակ: Նպատակը, ըստ կազմակերպիչների, ավելի լայն զանգվածներին տեղեկացնելն է, որ իրենց շարժումը շարունակվում է:

Երկու միջոցառումներն էլ՝ հանրահավաքն ու երթը, արտոնված էին:

50 ՏԱՐԻ ԱՏՏ ՄԵԴԱԼԸ ՇԱՏՁՎԵՑ ՆԻԿԻՏԱ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

1956 թ.

Մելքոնյանի
օլիմպիադական
խաղերում
ֆուտբոլի
ԽՍՀՄ
հավաքականի
տարած իրոք
պատմական



հաղթանակի 50-ամյա հոբելյանի առթիվ Մոսկվայում ՈՒ ֆուտբոլային միությունը կազմակերպել էր օլիմպիադական չեմպիոնների մեծարման երեկո: «Դիմանոյի» մանեժում

անցկացված հանդիսությանը ներկա էին պատմական հաղթանակը կերտած Նիկիտա Սիմոնյանը, Յուրի Բելյաեվը, Իոսիֆ Բեցան, Վալենտին Խվանովը, Անատոլի Իսաեվը, Ալեքսեյ Պարամոնովը, Բորիս Ռազինսկին, Վլադիմիր Ոխժեկինը, ինչպես նաև Կյանքից արդեն հեռացած Գավրիլ Կաչալինի, Խվան Մոգերի, Անատոլի Մասլոնկինի, Եղուարդ Ստրելցովի, Նիկոլայ Տիշենկոյի, Սերգեյ Սալինկովի զավակները, և Յաշինի այրին, իգոր Նետոնյի եղբայրը:

Ֆուտբոլասերներին հիշեցնենք, որ 1956 թ. Մելքոնի օլիմպիական խաղերում ԽՍՀՄ հավաքականը Եզրափակիչում 1-0 հաշվով պարտության էր մատնել Հարավսլավիայի ընտրանուն շնորհիվ Անատոլի Իսինի խփած միակ գոլի եւ դարձել էր չենափոն: Եզրափակիչում ԽՍՀՄ հավաքականի կազմն այսպիսին էր. Եւ Յաշին, Բորիս Կուզնեցով, Անատոլի Բաշաշկին, Միխայիլ Օգոնկով, Անատոլի Մասլոնկին, իգոր Նետոն, Բորիս Տատուշին, Անատոլի Իսաել, Նիկիտա Սիմոնյան, Սերգեյ Սալինկով, Անատոլի Իսին: Այն տարիներին, հավաքականների պաշտոնական հանդիպումներում փոխարինումներն արգելված էին, իսկ ոսկե մեդալները տրվում էին միայն Եզրափակիչ հանդիպման մասնակից 11 ֆուտբոլիստներին: Նիկիտա Սիմոնյանն այդ 11 երջանիկների թվում էր, սակայն մեծահոգարար իրեն հասանելիք ուսկե մեդալը հանձնել էր Եղուարդ Ստրելցովին:

Եվ ահա 50 տարի անց Նիկիտա Սիմոնյանը եւ նրա մյուս այն թիմակիցները, որոնք պարգետի չեն արժանացել, ստացան օլիմպիական մեդալների կրկնօրինակները: Այդ հաճելի անակնկալը խորհրդային ֆուտբոլի անվանի վետերաններին մատուցեց ՈՂ ֆուտբոլային միությունը, որի նախագահ Վիտալի Մուտկոն կատարեց պարզեւատրման հանդիսավոր արարողությունը:

Ա. Պապյան. «Միացյալ Նահանգների Կողմից Թուրքիայի Հանրապետությունը դե յուրէ ճանաչված չէ»

Երեվան, 11 ՄԱՅԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Միացյալ Նահանգների կողմից Թուրքիայի Հանրապետությունը դե յուրէ ճանաչված չէ: 1927թ., երբ ԱՄ-ի Սենատը քննարկվում էր ԱՄ-ի եւ Թուրքիայի հանրապետության միջեւ Լոգանում կնքված փոքր պայմանագիրը, ԱՄ-ի վերին պալատը մերժեց հաստատել այն ու ճանաչել հանրապետությունը: Բուն պատճառը մեկն էր. Սենատը նշեց, որ չի կարող ճանաչել մի պետություն, որը մերժում է իրականացնել Վուդրով Վիլսոնի իրավարար որոշումը եւ օկուպացված պահել այլ երկրի տարածքները: Այսօր իրավիրված ասուլիսում



այս մասին ասաց Կանադայում Հայաստանի նախկին դեսպան, արեւելագետ-պատմաբան Արա Պապյանը՝ պալեացնելով, որ այս փաստը քերին է հայտնի:

Վիլսոնի իրավարար որոշումը, որով նա սահմանագծել էր հայ-թուրքական սահմանը, Ա. Պապյանն ընդգծում է, որ ուժի մեջ էր եւ 1928թ., եւ այսօր: «Բոլոր պաշտոնական, այդ թվում ԱՄ-ի քարտեզներում մինչեւ 1933թ. հայ-թուրքական սահմանները եղել են վիլսոնյան սահմանները: Իսկ ինչու մինչեւ 1933թ., որովհետեւ այդ ժամանակ էր, երբ ԱՄ-ը դադարեց ճանաչել Հայաստանի առաջին հանրապետությունը», -փաստեց նա:

Իսկ թե ինչու այդպես էլ չիրականացվեց Վիլսոնի իրավարար որոշումը՝ Ա. Պապյանը բացատրում է նրանով, որ այլևս գոյություն չուներ այն երկիրը, որին պատկանում էր այդ տարածքները: «Զկար միջազգային իրավունքի այդ սուբյեկտը՝ Հայաստանի Հանրապետությունը: Իսկ Արեւելուտքում որեւէ մեկը շահագրգիռ չէր, որ մի ինպերիալիստական երկիր, որի ողջ ուշքն ու միտքը տարածները գրավելն էր, իր ազդեցությունն ուժեղացներ Միջին Արեւելքում», -պարզաբանեց նա:

Նշենք, որ 1920թ. նոյեմբերի 22-ին Վ. Վիլսոնի ներկայացրած քարտեզի համաձայն՝ Թուրքիայի տարածքում գտնվող Արեւմոյան Հայաստանի 90.000 ք.կմ պետք է անցներ միավորված Հայաստանին՝ այն դարձնելով 162.000 ք.կմ տարածքով երկիր:

Վախճանվել է աշխարհահռչակ Երգչուիի Գոհար Գասպարյանը


Երեվան, 17 ՄԱՅԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Վախճանվել է աշխարհահռչակ Երգչուիի Գոհար Գասպարյանը: Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարությունից, մայիսի 16-ին կյանքի 83-րդ տարում իր մահկանացուն է կնքել՝ «Հայկական սոխակը»՝ հայ օպերային արվեստի մեծագույն վարպետ, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ, Սոցիալիստական աշխատանքի հերոս, Հայաստանի ժողովրդական արտիստ, «Մեսրոպ Մաշտոց» շքանշանակիր, Երեւանի կոնսերվատորիայի պրոֆեսոր Գոհար

Գոհար Գասպարյանը ծնվել է 1924թ. Կահիրենում: Ուսանել է տեղի երաժշտական ակադեմիայում: 1948թ հայրենադարձել է: 1949թ-ից Հայաստանի օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում հանդես է եկել 23 օպերաների գլխավոր դերերգերով, իսկ նրա համերգային երգացանկում տեղ են գտել ավելի քան 500 ստեղծագործություններ:

ՄԱՐԱՏԵԼ Է ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԲԱԳՐԱՏ ՂԱՐԻԲՁԱՆՅԱՆԸ

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի Ա. Մաջոյանի անվան Նույր օրգանական թիմիայի հնստիտուտի տնօրինի խորհրդական Բագրատ Ղարիբջանյանը շուրջ 15 տարի՝ 1988-2003 թթ. գիտական այս օջախի ղեկավարն էր: Նա բժշկագիտության դոկտոր պրոֆեսոր էր, Հայաստանի բժշկական գիտությունների, ռուսական եւ եվրոպական բնական գիտությունների, բնության եւ հասարակության մասին գիտությունների եւ

ազգային անվտանգության պրոբլեմների ակադեմիայի ակադեմիկոս: Ծնվել է 1937 թվականին, Վանաձորում: Գիտության թեկնածուի աստիճանը ստացել է Մոսկվայում, որից հետո Կիեվում պաշտպանել է քաղցեղի ուսումնասիրության եւ դեղաբուժության վերաբերյալ դրկուրական թեգ: Գիտական գործունեության ընթացքում հայտնաբերել է 1200-ից ավելի հակառաօտցքային նոր միացություններ, բացահայտել դրանց քիմիական կառուցվածքն ու կենսաբանական հատկությունների օրինաչափությունները: Յեղինակել է ավելի քան 250 գիտական հետազոտություններ, ստացել 29 հետինակային արտոնագրեր: Նրա մենագրություններից մի քանիսը տպագրվել են Ս. Նահանգներում, Ռուսաստանում:



Միջազգային

Թուրքիայում նախագահի ընտրությունները դադարեցվել են թեկնածուի բացակայության պատճառով

ԱՄԿԱՐԱ, 10 ՄԱՅԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Թուրքիայի խորհրդարանը չորեցաբթի օրը հայտարարել է, որ նախագահական ընտրությունները դադարեցվել են պետության դեկավարի պաշտոնի համար թեկնածուի բացակայության պատճառով:

Նախագահին կընտրի նոր խորհրդարանը, որի ընտրությունները նշանակված են հուլիսի 22-ին:


Ավելի վաղ Թուրքիայի արտաքին գործերի նախարար Արդուլլահ Գյուլը հանել էր նախագահի պաշտոնի համար իր թեկնածությունն այն բանից հետո, եթե նախագահին ընտրող խորհրդարանի նիստում երկու անգամ պատգամավորների սահմանադրական մեծամասնություն չափահանվելու:

Թուրքիայի գործող նախագահ Ահմեդ Նեջեթ Սեզերը, որի յոթնամյա լիազորությունների ժամկետը լրանում է մայիսի 16-ին, ավելի վաղ հայտարարել է, որ պաշտոնում կմնա այնքան ժամանակ, քանի դեռ պետության նոր դեկավար չի ընտրվել:

«The World Almanac»-ՈՒՄ ԹՈՒՐՔԻԱՆ ՏԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԵՐԿԻՐ

«The World Almanac and Book of Facts» հրատարակությունը Թուրքիան ընդգրկել է ցեղասպանության համար պատասխանատու երկրների ցուցակում: Ինչպես տեղեկացնում է ֆրանսահայ լրագրող Ժան Էվլիյանը, 2007 թ. հրատարակության մեջ նշվում է, որ 20-րդ դարասկզբին Օսմանյան Թուրքիայում հայերի զանգվածային ոչնչացումը «ցեղասպանություն է»: Յետաքրքրական է, որ հրատարակող Ալմանախում Յայոց ցեղասպանության մասին նշվում է, որ հայերի

ոչնչացումը Օսմանյան կայսրությունում տեղի է ունեցել 1915 թ., երիտրուքերի կողմից եւ զոհերի թվով ենթադրվում է մոտ մեկ միլիոն: Ընդ որում, Ալմանախում Թուրքիան նշվում է «հանցագործություն եւ ահաբեկչություն, ցեղասպանություն» բաժմի տակ:



Շրանտի Շիշատակին

Սիրելի Շրանտ

Թո այդ բյուրեղյա սիրտը, մինչեւ վերջին պահը բարխում էր մեր մարդկային արժանապատվության վերականգնման, հոգեվարքի մեջ գտնվող խաղաղության եւ բարեկամության վերա-hաստատման համար: Դու քո պայծառ գիտակ-ցուրեյմբ, անսահման մարդասիրությամբ, մահն արհամարհող հանդգնությամբ պատռեցիր հարյուրամյա վաղեմության քողը, որ օգտագործվում էր աչքեր կուրացնելու, խիզը քննեցնելու, հիշողությունը ջնջելու նպատակով: Յիմնովին խարիսկեցիր վախի եւ մթության արքայությունը: Յուսի թշնամիները քո գոյությունը շռայլություն համարեցին ընտանիքիդ, հայ ժողովրդի եւ այն մարդկության համար, որը հույսով է ապրում: Նրանք ի դեմս քեզ, տեսան հանուն իրավունքի պայքարող եւ արդարություն որոնող ժողովրդիդ: Թո ձայնով լսեցին 1,5 մլն անշիրիմ նահատակների ճիշը, որը խանգարում է դահիճների քունը: Չկարողացան քեզ մարսել: Այդ խկ պատճառով էլ սպանեցին: Դու, գրավելով մարդկության սիրտը, անցար անմահների շաղթը: Ցավակցում ենք ընտանիքիդ, հայ ժողովրդին, քո զինակիցներին եւ «Ակոսի» աշխատակիցներին:

«Միություն ըննդեմ ցեղասպանության» կազմակերպության անունից

ԱԼԻ ԷՐԹԵՍ, ԲՅՈՒԼԵՆԹ ԳՅՈՒ



1954-1915

Հայուհին փորձում է Թուրքիայի խորհրդարանի պատգամավոր դառնալ

Թուրքիայ Վերքին Արյուրան դիմել է կառավարող «Արդարություն եւ զարգացում» կուսակցությունից Թուրքիայի խորհրդարանի պատգամավոր դառնալու համար եւ սպասում է կուսակցության ցուցակում իրեն ընդգրկելու վերաբերյալ վերջնական որոշմանը: 61-ամյա Վերքին Արյուրան Պատմական ժառանգության պաշտպանության հաստատության հիմնադիրը եւ

գործադիր տնօրենն է եւ, «Թրքիշ դեյլի նյուս» թերթի վկայությամբ, ակտիվ դեր է խաղացել Աղթամարի Սուլր հաջ Եկեղեցու վերանորոգման գործում:

«Արդարություն եւ զարգացում» կուսակցության ցուցակում ընդգրկվելու դեպքում նա կլինի հայկական ծագում ունեցող առաջին պատգամավորության թեկնածուն 1980-ականներից ի վեր:

Արյորան հայտարարել է, որ ընտրվելու դեպքում ջանքեր է գործադրելու հայ - թուրքական հարաբերությունների կարգավորման ուղղությամբ:

«Որպես հայուիհ՝ ես ընտրվելու դեպքում կարող եմ ավելի արդյունավետ պաշտպանել Թուրքիայի իրավունքները Եվրամիությունում», - «Թրքիշ դեյլի նյուս»-ին ասել է նա հավելելով. - «Ընտրություններում իմ առավելությունը հայ լինելս է»: Արյորան հայտնել է, որ պատգամավորության թեկնածու առաջադրվելու համար ստացել է իր ընտանիքի եւ Պոլս հայոց պատրիարքի հավանությունը: Վերջին Արյորան Անկարայից է, սերում է Կարապետյանների ընտանիքից, նրա հայրը Թուրքիայի առաջին գործարարներից էր: Թուրքահայ կինը վստահեցնում է, որ 1915-19 թվականների իրադարձությունների ժամանակ իրենց ընտանիքը կորուստներ չի կրել: Դայոց ցեղասպանության առնչությամբ Արյորան ասել է, թե «դա պատմության հարց է»: «Ամեն օր այդ հարցի քննարկումը պնդելը վճասարել է: Նայենք առաջ՝ ետ նայելը մեր գործը չէ», - հայտարարել է նա: Թուրքական թերթի փոխանցմանը, Արյորան հայտնի է թուրք առաջադեմ գրող, Նորեյան մրցանակի դափնեկիր Օրիհան Փամուկի, ինչպես նաև Ստամբուլի «Ակոս» թերթի սպանված խնբագրապետ Ջրանտ Դինքի հայացքների նկատմամբ քննադատական դիրքորոշմանը:

Հասարակական Հանձնախումբ

Ժողովրդական Միասնական Հանձնախումբ

Իրանահայ համայնքի ազգային-համահայկական կյանքում առավել գործոն մասնակցություն բերելու կրթադաստիարական-մշակութային և այլ հարցեր և դժվարությունները ուսումնասիրելու և պատասխաններ և լուծումներ որոնելու և այդ ոլորտում ազգային իշխանությանը օժանդակելու նպատակով կյանքի կոչվեց մի հանձնախումբ (քաղկացած «Րաֆֆի» ՍՍ համալիրից, ԻԱՍ միությունից, «Արաք» շաբաթաթերթից և պատգամվորագան ժողովից մի խումբ պատգամավորներից): Այս հանձնախումբի միջոցով ապրիլեան մեծ եղեննի 92-րդ տարեթիցը նշելու և բյուրավոր նահատակների հիշատակը ոգեկոչելու նպատակով ապրիլ 26-ից 30-ը իրան էր հրավիրվել Հայաստանի մտավորական ԵՊՀ-ի արևելագիտության ֆակուլտետի թթագիտության ամբիոնի վարիչ՝ պոռֆեսոր Ալեքսանդր Սաֆարյանը:

Հարգարժան դասախոսը ապրիլ 26-ի ժամը 15-ին թերան ժամանեց և նույն երեկոյան ժամը 19-ին իր առաջին ելույթը ունեցավ «Րաֆֆի» ՍՍ համալիրի

սրահում ավելի քան 1000 հանդիսատեսների ներկայությամբ: Իր ներկայությամբ երեկոն արժեվորվել էր ինչ-ում ՀՅ արտակարգ և լիազոր դեսպան Հարգարժան պիտին. Կարեն Նազարյանը:

Հարգարժան դասախոսը իր ելույթների ընթացքում բազմարժանակ տեղեկությունների փոխանցեց այն հսկայական աշխատանքների մասին որը վերջին տարիների ընթացքում կատարել է ԵՊՀ-ի թթագիտության ամբիոնի, Եղեռնի մասին կատարած փաստաթղթերի ուսումնասիրման և հրատարակման մասին:

Գիտական այս ազգանվեր աշխատանքի կողքին, որ անտարակույս նպատակառությամբ են հայոց դատի արդարացի լուծման և հայ ժողովրդի իրավունքները վերականգնման սիրելի բանախոսը իր ելույթները վարում էր մեծ ոգերությամբ իր միտքը խտացնելով հետ-եալ կերպ: Սկյուռքահայ և տարագիր հայ ժողովրդի մասնիկների համախումբը Մասիսի լանջերին, որը մեծ հուզմունքով և խանդակառությամբ էր ընկալվում հանդիսատեսի կողմից:

Հանձնախումբը իր բոլոր ծեռնարկների համար հրավերներ էր առաքել թեմիս բարեխնամ առաջնորդ Տեր. Սեպուհ Արք. Սարգսյանին, Թժիս-ի, Պժ-ի, դիվանին և ազգային իշխանության բոլոր մարմիններին որը մնաց անարձականգ և այն հարցադրումն առաջացրեց հանձնախնդի և բոլոր հանդիսատեսների մոտ որ միթե հայ դատը և այդ դատ արդարացի լուծման համար տարվիլ ամեն մի դրական քայլին չպետք է արձականքն ազգովի և միասնական կեցվածքով:

Ապրիլ 27-ը ուրբար օր էր: Առավոտյան ժամը 11:00-ին իրանահայ գրողների միությունը հարգարժան դասախոսի հյուրընկալը էր: Գրողները մեծ ընկալումով լսեցին դասախոսությանը նաև ահարցել եղան:

Նոյն օրվա կեսօրից հետո ժամը 3:00-ից 6:00-ը «Րաֆֆի» համալիրի պատասխանատունների համար կազմակերպվել էր մտերմիկ-գիտական գրուց հայ դատի ու հարակից խնդիրների մասին:

Ուրբար օրվա երեկոյան ժամը 19:00-ին իրանահայ ազգային և մշակութային միությունում սկսվեց «սեմինար-խորհրդակցություն»: Համայնքի մտավորականները և միայն ակտիվ անդամները թվով ավելի քան 100 հոգի, շերմ ու հագեցված երեկո ճաշակեցին: Կարծ դասախոսությանը հետևած տեսակետների արտահայտության և հարց ու պատասխանների ընթացքը գնալով շերմացավ և տևեց մինչև կեսգիշեր անց:

Ապրիլի 28-ին ՀԲԸ կանանց բաժնի անբողջ անդամներով ունկընդիրն էր մեծարգու պրոֆեսորի դասախոսությանը: Նաևս հարց ու պատասխաններ եղան:

Երեկոյան ժամը 19:00-ին հանդիպումը նախատեսվել էր անցկացնել «Արաք» շաբաթաթերթի խնբագրատանը, քայլ համայնքի մտավորականների բուռն ընդհառաջումը հիմք դարձավ որպեսզի 19:30-ին ՀԲԸ սրահը դառնա հանդիպման վայր, որտեղ նախորդ գիշերվա օրինակով շերմ գրուց ծավալվեց:

Այդ գիշեր ՀՅ դեսպանը ընթրիքի էր հրավիրել Հայստանից նույն նպատակով ժամանած պրոֆեսոր Սաֆարյանին ու Կանադայում ՀՅ նախքին դեսպան ու դիվանագետ Արա Պապյանին:

Կիրակի օրը ժամը 12:00-ին Հայաստանի Հանրապետության դեսպանություն էին այցելել հանձնախնդի անդամները Դկտ. Սաֆարյանի հետ: ՀՅ

դեսպանը մեծ ուշադրությամբ ընդունեց այդ օրերի արածի մասին համայնքի ակտիվ գեկույցը:

Երեկոյան մեծարգո հյուրը այցելեց «Արաք» շաբաթաթերթի խմբագրություն և ծանոթացավ նրա գործնեության հետ:

Երկուշաբթի Վերջին օրն էր և մեծարգո հյուրը կարողացավ նաև ծանոթանալ մեր քաղաքի՝ Թեհրանի որոշ հատվածների հետ և երեկոյան ժամը 19:00-ին ավարտելով իր բեղմնավոր ու արգասավոր 4 օրյա ճանապարհորդությանը Երևանի թրիչքով տուն վերադարձավ նորից Թեհրան այցելելու խոստում տալով իր հետ օդակայան ժամանած բարեկամներին:

Վերջում պետք է մեր շնորհակալությունը հայտնենք հանձնախմբի մեջ համախմբված բոլոր այն հաստատություններին ու անհատներին, որոնք նաև իրենց նյութական օժանդակությամբ հնարավոր դարձրին այդ դասախոսությունների և միջոցառումների կազմակերպումը:

**Հանձնախմբի դիվանի նախագահ
Դարձություն Քեշիշյան**

Իրանահայ մտավորականների հավաք «Րաֆֆի» համալիրում

Իրանահայությամբ հուզող տարրեր հարցերի շուրջ մտքերի փոխանակումների անհրաժեշտությունը վաղուց էր գգացվում իրանահայ մտավորականների շրջանակուն: Մի շաբթ մտավորականներ դիմելով համալիրին իրենց ցանկությունը հայտնեցին համալիրում նման հավաք կազմակերպելու ուղղությամբ և մշակութային նարմինը և վարչությունը մեծ ուրախությամբ կազմակերպեց այդ հավաքը և ուրբաթ փետրվարի 3-ին Երեկոյան ժամը 6-ին տեղի ունեցավ այդ հավաքը: Հավաքին ներկա էին «Ալիք» օրաթերթից, «Արաք» պարերականից, քաղի պատգամավորներ, տարրեր միությունների նախագահներ ու ներկայացուցիչներ: Ներկաների թիվը անցնում էր 120 հոգուց և ըստ որոշ տվյալների նման հանդիպում շատ քիչ է կազմակերպվել Վերջին ժամանակներում, որտեղ նաև նախակցեն տարրեր գաղափարների և մոտեցումների տեր մարդիկ և տարրեր միություններից ու շրջանակներից:

Հավաքի սկզբում «Րաֆֆի» համալիրի վարչության անդամ և մշակութային մարմնի կապ Դոկտ. Ռայմոնդ Թորոսյանը հանդես գալով նախ խնդրեց բոլոր ներկաներին թուրքայի հայ մտավորական, հասարակական գործիչ և «Ակոս» թերթի գլխավոր խմբագրի տերորի հետևանքով նրա մահվան կապակցությամբ մեկ րոպէ լրություն, ապա ողջունեց նման հավաքը, հավաքը վարելու նպատակով նա խնդրեց իրանահայ մտավորական, արձագագիր, գրող ու քարգմանիչ Պրո. Խաչիկ Խաչերին կատարել այս պարտականությունը: Պրո. Խաչիկ Գալստանյանը այսպես սկսեց իր խոսքը «Հաստ ուրախ եմ և գգացված, որ կարողացել ենք այսքան իրանահայեր կամ ավելի շուտ թեհրանահայեր հավաքել իրար շուրջ, մեր նպատակն այն է, որ կարողանանք ընդիմանաբան գրուց կամ մթնոլորտ ստեղծենք իրար հետ խոսելու և գրուցելու մեր իրանահայ մշակույթի զանազան խնդիրների շուրջ: Սենք ուզում ենք զանազան կարծիքներ լսենք և կարծիքահավաք անենանք և ըստ այդ կարծիքների եթե հնարավոր է միասին որոշ ելքեր գտնենք մեր մշակույթը

պահելու, մեր հայկական մշակույթը ավելի զորացնելու համար:

Այսուհետև Պրո. Խաչիկը բացատրություն տվեց մշակույթ բարի կապակցությամբ և ըստ հանրագիտարանի այսպես սահմանեց «մշակում, դաստիարակում, կրթություն հասրակության և մարդու պատմական գարգացման որոշակի մակարդակ, որը արտահայտվում է մարդկանց գործունեության և կյանքի կազմակերպման ձևերով»: Երկու ծև մշակույթ կա՝ նյութական և հոգևոր, նյութականը ընդգրկում է ողջ նյութական գործունեությունը և դրա արդյունքները, աշխատանքի գործիքներ, կացարան, հագուստ, հաղորդակցության միջոցներ և այլն: Հոգևոր մշակույթը ընդգրկում է գիտակցության, հոգևոր արտադրության ոլորտը՝ ճանաչողություն, բարոյականություն, դաստիարակություն, լուսավորություն և հասարակական գիտակցություն: Պր. Խաչիկը նշեց, որ այս հավաքները հարմար կլինի սկսել մի շաբթ մշակութային լուրեր փոխանցելով, ապա տարբ երկրներում և հայրենիքում տեղի ունեցած կարևոր մշակութային անցուղարձերին անդրադարձ:

Այսուհետև բեմ հրավիրեց տարիների փորձարու ուսուցիչ, ազգային գործիչ, մտավորական և Թթված Պատգամավորական ժողովի անդամ Պրո. Միշա Յայրապետյանին: Պրո. Միշան այսպես սկսեց իր խոսքը՝ «Որպես նախարար, բացատրության կարգով ասեմ, որ նկատի ունենալով այն հանգամանքը, 20-րդ դարի վերջում և 21-րդ դարի սկզբից մշակութային և գրական իմաստով ոչ միայն չենք զարգացել, այլ տեղ քայլ ենք ունեցել»: Պրո. Միշան այսուհետև ներկայացրեց մի շաբթ ծրագրային տեսակետներ, որոնք կրում էին վերնագրային բնույթ:

Այսուհետև խոսքը տրվեց ներկաներին արտահայտվելու համար երեք բովանդակում: Հիմնականում ներկաներն արտահայտվեցին հետևյալ մտքերն ու կարծիքներն:

1-Մեր համայնքը մշակութային անկում է ապրել:

2-Մենք իրանահայ մշակութային արտադրություն չենք ունեցել, այլ ուրիշ հայկական շրջանակների մշակույթը կամ ընդորինակել ենք կամ էլ արտատածել:

3- Հայաստանի Հանրապետության ազգային հեռուստատեսության սփորում մեզ մոտ պատճառ է դարձել, որ մշակութային որոշ աշխուժություններ նվազի:

4- Լավ կլինի ազգային մարմիններում ինչպես ունենք կրթական խորհուրդ, այդպես էլ ունենանք Մշակութային խորհուրդ, որտեղ տարրեր տեսակետի տեր մարդիկ այդտեղ կընդգրկվեն և կվարեն մեր մշակութային կյանքը համայնքում:

5-Միություններին օգնելով զարգ տալ միություններում մշակութային աշխատանքները:

6- Հարց է թե ինչու արտագաղթողները Հայաստան չեն գնում և գնում են ուրիշ երկրներ, այս հարցը կարելի է մի խոսակցության թեմա դարձնել և քննարկել:

7- Եթե լսենք տարրական դասարանցիների խոսակցությունը կիմանանքը, որ ողբերգություն է, քանի որ մեր դպրոցները այս վիճակի մեջ են, մենք որևէ քայլ առաջ չենք կարող ունենալ: Դպրոցն է մեր ամեն ինչը: Եթե մեր համայնքի բոլոր այրերը և պատասխանատու մարդիկ ծեռք ծտանք մի քան ստեղծենք դպրոցները ի մի բերելով այն ինչ հիմնական է, մենք չենք հաջողվի:

8- Առաջարկները պետք է հանգեցնեն նրան, որ գործնական ելք պետք է գտնել շատ հարցեր լուծելու համար:

9- Կրթական և թեմական մարմիններից էլ պետք է մասնակցեն նման

հանդիպումներին: Դկտ. Ռայմոնդ Թորոսյանը տեղեկացրեց, որ նրանք հրավիրված են եղել բայց չեն ներկայացել:

10- Լավ կլինի Թեմական խորհուրդը կյանքի կոչի մշակութային մարմին, որը կզբաղվի համայնքի մշակութային հարցերով:

11- Մենք կարող ենք առաջարկներ տալ, բայց մասնագետների կողմից նաև պետք է ուսումնասիրություն լինի:

Վերջում կրկին անգամ հույս հայտվեց, որ նման հանդիպումները շարունակվեն և ինչոր տեղ օգտավետ լինեն մեր համայնքի մշակութային կյանքը բարելավելու ուղղությամբ:

Սուսաննա Համբարչյան

Աշակելութային

Զավախքում կայացավ «Ուրախների և հնարամիտների ակումբ»խաղ-մրցույթ

Ախալքալաք. 17. Մայիսի “ՈՒՅԱ Խաղ- մրցույթը ցույց տվեց, որ Զավախքում հայն ապրում է հայկական հոգով, հսկ մասնակիցներն աչքի ընկան իրենց դերասանական վարպետությամբ”, - մայիսի 15-ին Ախալքալաքի շրջանային մշակույթի տանը կայացած “Ուրախների և հնարամիտների ակումբ” խաղ-մրցույթի մասին Զավախք-իմֆոյի թրակցի հետ զրույցում իր կարծիքն հայտնեց երաժշտ Յարություն Մուրադյանը:



Խաղ-մրցույթը բաղկացած էր չորս մասից՝ ողջույնի խոսք, նախավարժանք, երաժշտական մրցույթ և տնային հաճանարարություն:

ՈՒՅԱ կազմկոմիտեի պատասխանատու Յարություն Կարախանյանի խոսքերով, խմբերը դերասանական վարպետությամբ ցուցադրեցին պատրաստած համարները. “Մենք լիահոյս ենք, որ կարողանանք դերասանական ընդունակությունների տիրապետող մասնակիցներով համարել ապագա ՈՒՅԱ-ի մեր խումբը, որը միջազգային բեմերում բարձր մակարդակով կներկայացնի Զավախքը”:

Դահլիճում ծածանվող ԶԵՍՍ դրոշների ներք հանդիսատեսին ՈՒՅԱ խաղ-մրցույթի մասնակիցները պատճառեցին մեծ բավականություն:

Դիշեցնան կարգով նշենք, որ ՈՒՅԱ խաղ-մրցույթը կայացավ “Զավախքի Երիտասարդական Մարզամշակութային Միության” նախաձեռնությամբ, իսկ ինքորմացիոն հովանավորը Զավախքի Երիտասարդական Ռադիոն էր:

Զավախք-իմֆո 17.05.2007թ.



ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Մեր հրետանին կանգնել էր այս Մեծամոր բլրի տակ, նրան չէին օգնում ոչ իին մագաղաբները, ոչ իիքսուները, ոչ էլ Երկիրը գնդած գիտնականները, եւ ոռնոցով աղերսում էր գեր Արարատյան հանրապետություն, հովտի գոնե կեսը: Երկու միլիոն մեռելի վրա խնդալու իրավունքը ծեզ, երկու միլիոն դարբիններին եւ բանաստեղծներին ափսոսալու կամ ամենեւին էլ չափսոսալու իրավունքը ծեզ, երեք միլիոն թափառականի կարուոր ծաղրելն էլ ծեզ, այս մի երկու մարդուս թույլ տվեք կուչ գանք մեր հին մեծ տան մի անկյունում, խոստանում ենք լաց չլինել, խոստանում ենք չիշեցնել... Ամբողջ օրը մեր հրետանին քանդուքարափ էր անում մեր Սարդարապատը, ապա տղերը լծվեցին եւ, եզան պես առանց ձայնի արտասվելով թնդանորները թիզ առ թիզ քաշեցին Արագածն ի վեր Ապարան, որովհետեւ թշնամին ազնիվ ճակատանարտ, ազնիվ հաղթանակ կամ պարտություն չէր ուզում, քանի որ թշնամի չէր, այլ բորենի, եւ բորենին մեր ողկույզը չէր ուզում, այլ մեր լշշը: Յետո թշնամին գովել էր թե այդ հայերը, ոչինչ. Կարծես թե տղամարդ են, կոչում են,- եւ հիմա մի փափկամորք մարմին է փաթաթվում վզիս, թշնամու գովեստն ինձ ուրախացնում է եւ ես շան մազի համ եմ առնում:

Կը կը կը կը կը առան, կունկները հա թռան, կունկների թեփի տակ Եղավ գարուն մեր դրան, երկու անգամ մեկ՝ երկու, երկու անգամ երկու՝ չորս, երկու անգամ երեք՝ վեց... Յովիաննես Թումանյանը երեխաների սիրելի բարեկամն է,- շապիկը մաքուր, եղունգները կտրած, պայուսակի մեջ չորս հատ գիրք, թանքամանի փակ բերանը՝ բութ մատի տակ, վիզը բարակ մեծ գլուխն ուսերին ճոճելով երեխան գնում էր դպրոց, մայիսյան առավոտը զնոգում էր նրա մաքուր եռթյամբ մեկ, եւ շունը ցանկապատից թռավ նրա երեսին: Նրա լորձունքը քսվեց երեխայի աչքերին, երեխան մի պահ փաթաթվեց շան կեղսուս մորթով ու մազ ծամեց, ապա նրա փիսրուն ծերքերը ետ հրեցին շան վիզը, նրա ոտքերը դեն նետեցին շան սայթաքուն ծանրությունը: Զեռքը կոշտ մի բան գտավ ու բախվեց շան գանգին: Յիմա շունը կանգնել էր շատ մոտիկ ու լորձունքոտ հաշոցը շպոտում էր նրա աչքերին: Նա այդ շնից չէր վախենում, նա զգվում էր այդ շան կեղսուս հաջողից եւ, տեսնելով իր երեսին հառված այդ հայացքի պարապությունը, ջղայնությունից ուշագնաց էր լինում: Թու, ծամածռվում էր նա ու լաց էր լինում այն բանի համար, որ այդ շնինը, այդ անասունը, այդ թիքն իրեն արժանի էր համարում լինելու այդ մարդու հավասար հակառակորդը: Այնինչ զգվելի է նրա մազը ին բերանում:

Գիտե՞ս ինչ, կյանք է եւ մի ակնկալիր անփոթորիկ ծով. եւ եթե խորտակվում ես՝ մեղքը քոնն է եւ ոչ թե փոթորիկնը, քանի որ փոթորիկը ծովն է: Ո՞ւր է խարիսխսդ: Խարիսխսդ:

Կաղ, կուզ, գեղեցիկ, ճաղատ, ծիծաղելի, մուայլ, սուս ամկուրում, սուս հանդիսավոր, դժգուհ, ամվերջ դժգոհ, ուրաշխ, անմտության չափ ուրախ բանաստեղծների քո տոհմը, ծաղրածուների այդ մեծ ընտանիքը հիմա ամբողջ աշխարհով մեկ արեւ է փոռում,



արեւի մեջ սամիրի բույր է փոռում, ծիրանի ծառ է տնկում, լուսին է օծում, հմայիլի աղոթքով փափկեցնում է մարդու ժամիքները, ինաստավորելով նահը՝ լրին գերեզմանատներ է դուռը արեւի տակ, ինաստավորելով ծնունդը՝ ուրախության բաժակներ է փշորում, աղավնիներ ու աստորափիներ է շարտում երկինք, հավերժելու տարտամ ցանկությունը դարձնում է հայրենիքի կարոտ, փառաբանում է հացի լինելը եւ փառաբանում է հացի չինելը, տղամարդ-ավազակներից շինում է հայրավանակներով, բանաստեղծների այդ տոհմն ահա աղուտ հարթավայրը դարձել է Արարատյան դաշտ,- եւ մարդիկ խճբավորում են ըստ արհեստների եւ չկա խճբավորման մի այլ կերպ, եւ թող սուրբ լինի բանաստեղծների քո ընտանիքը, որի հոգնած նահապետի ճանապարհն այստեղ, այս բլոր տակ իր տան որանը փակեցին գինվիրական գործի մարդիկ ու պահանջեցին. «Անցարութեք: Բանաստեղծնանաստեղծ չեն հասկանում, անցարութեք»: Նա նահապետ էր, բայց բանաստեղծների քո նահապետն էր միայն քոնք:

Բանաստեղծների քո տոհմն ահա կախաղանների տակից խեղկատակորեն աչքով է անում. սխալնամբ բանտ է նստել եւ քմիջաղով սպասում է թե հիմա թյուրիմացության համար ներողություն են խնդրելու, ատրճանակ բռնել զգիտե եւ գնում է մենամարտի, Յիշլերի ականջն ի վեր մրջունի ծայնով գորում է թե ինքը համաձայն չի նրա կարծիքին եւ ունի բոլորովին այլ տեսակետ, կապում է կործանված կամուրջները եւ չի նկատում, որ իր ետեւից քանդելով գալիս են նույն կործանողները, կախաղանի տակից շփոք ժայռով նայում է քեզ թե հիմա կիասկանան իրենց սխալը եւ սխալն էլ մարդկային է, ոչինչ: Յաղթած բանակների գեներալները պարտված բանակների գեներալներին չեն կախում, այլ նստում են նրանց հետ հացի եւ որովհետեւ բանակային օրապահիկը չի բավականացնի խնջույքին՝ հաղթած բանակի գեներալները շանսատակ են անում իրենց բանակի բանաստեղծներին: Յեռավոր ուղերձի վարորդները իրարու ողջունում են զվարք շշոցով ու ծախ ծեռքի զուսպ բարձրացնամբ՝ հայտնելով միմյանց ողջ տեսնելու ուրախության եւ նույն սիրո մասին առ իրենց արհեստը: Թշնամական ռմբակիրները հանդիպակաց սլաքով գնում են քարութանդ անելու թշնամական քաղաքները եւ նույն երկնքի մեջ չեն բախվում մեկմեկու: Այդպես:

ՀՐԱՍՏ ՍԱԹԵՎՈՒՅՆ

«Մեծամոր», 1985թ.

Երաշյա Աճառյանը Պարսկաստանում

Իր «Կյանքիս հուշերից» գրքից

ՆԱԽԱԲԱՆ

1918 թվականին էր: Փախանք ընտանյոք Բաքվից դեպի Էնգելի: Շամախու կոտորածից հետո, վերապրոյ 600 հայ որբերին Բաքու էին փոխադրել և փախուտի ժամանակ պետք էր նրանց տանել Էնգելի: Այդ որբերին լցրեցին աղբեջանական «Ալավերդի» շոգենավը, որի նախապետը և անձնակազմը աղբեջանցիներ էին: Այդ շոգենավը ինձ հանձնեցին Էնգելի տանելու համար: Խաղաղությամբ հասանք և դուրս եկանք Էնգելիի

նավահանգիստը:

Մի կարևոր դեպք: Ազգային մարմինները, իրենց արխիվը թուրքերի ձեռքը չթողնելու համար, նախապես ուղարկել էին Էնգելի: Ես էլ իմ Արմատական բառարանը հանձնել էի նրանց, բոլոր այդ ձեռագրերը բերել-թափել էին հայոց դպրոցի սրահում: Այդտեղ էր բարեբախտաբար Կեղրոնականի իմ դասընկեր սեբաստացի Գևորգ Մկրտչյանը, որ ավարտել էր Փարիզ՝ Ponts-et-chasses (կամքաց և խճուղեց) դպրոցը և 800 ֆրանսիացի ուսանողների մեջ մրցմամբ առաջինն էր դարձել ավարտական քննության ժամանակ: Այն ժամանակ նա Բաքու Մանթաշյանի գործարանի գլխավոր ինժեներն էր, շատ սիրված մի անձնավորություն, որ բանվորների մեջ հայտնի էր Գեորգի Նիկիտիչ անունով: Վերջին օրերին նա անցագրով ամբողջ ընտանիքով փոխադրվել էր Էնգելի և իշել այդ դպրոցը: Նա հյուրներներ են նեզ և ինձ հանձնեց իմ բառարանը: Սա երրորդ անգամն էր, որ բառարանս ազատվում էր կորսատից: Էնգելի եղած ժամանակները հիշատակության արժանի մի դեպք պատահեց: Հյուսիսափայլի խմբագիր Ստեփանոս Նազարյանի որդին մեռել էր Էնգելիում: Մայրը, որ մի պառավ կին էր, եկավ հայտնեց այդ մասին մեզ՝ փախստական հայերին, և մենք արժանավոր թաղում կազմակերպեցինք Նազարյանի վերջին ժառանգին, որին թաղեցինք Էնգելիի հայոց եկեղեցու գերեզմանատնում:

Թեհրանում բացվել էր հայոց առանձին դպրոց «Ծնողական դպրոց» անունով: Տեսուչն էր իմ ծանոթ Կարապետ Պիրոյանը, որ գրեց ինձ, թե այդ դպրոցում ուսուցչական պաշտոնի տեղ կա: Ես համաձայնվեցի գնալ և ստանալով 100 թուման ճանապարհածիս, կեսը տվի կնոշս հորը, մնացալով գնացի Թեհրան:

Մնացի Թեհրանում ամբողջ 1919 թվականին նույն դպրոցում, ուր ավանդում էի ֆրանսերեն, հայերեն և հաշվապահություն: Ուսումնական տարվա վերջին որոշեցինք վերադառնալ Երևան, ուր կազմվել էր Հայկական կառավարություն և Վերջ էր տրվել հայ թուրքական ընդհարումներին: Բարվով դաշնալ վախեցա, ուստի որոշեցինք Թավրիզով գնալ Երևան: Տարվա վերջն էր արդեն և դպրոցը պիտի փակվեր: Ես մտադիր էի գնալ Նոր-Ապահան, ուսումնասիրելու համար հայոց բարբառը, բայց Երևանի դրությունը այնպէս էր լավացել, որ շտապ Հայրենիք վերադառնալը ամենքի փափազն էր: Այդ միջոցին Թեհրանի հոգաբարձության անդամներից մեկը՝ Հովսեփ խան Բաքախանյանը դիմեց ինձ և առաջարկեց անպատճառ գնալ նախ նոր-Զուլա և հետո Երևան: Ինքը նոր ջուղայեցի լինելով ուզում էր, որ իր մայրենի բարբառը ուսումնասիրվի: Տվեց ինձ 50 թուման ճանապարհածիս այն պայմանով, որ ես ամբողջ ժամանակը ապրեի իր եղբոր տանը ձրիաբար, վայելելով ամեն հոգաբարություն: Զիջեցի, գնացի Նոր-Զուլա և մի ամիս մնալով կատարեցի աշխատանքս, որ և տպվեց Երևանում 1940 թվականին: Այս բոլորի մանրամասնությունը գրի եմ առել, որ և կցում եմ սրան:

(Ժարուհակություն 1)